

ՀՈՎՅԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԸ

ԼԵԼԱ ԶԱՎԱԽԻՇՎԻԼԻ (Թբիլիսի)

Հայ մեծ գրող և հասարակական գործիչ Հովհաննես Թումանյանը (1869–1923) անձնուրացաբար պաշտպանում և զգուշությամբ էր վերաբերվում վրաց և հայ ժողովուրդների միջև ավանգական բարեկամական ու բարիդրացիական հարաբերություններին: Այդ պատճառով էլ նրա հարուստ և բազմաբնույթ ստեղծագործական ժառանգության մեջ նշանակալից տեղ է հասկացվել Վրաստանի թեմային:

Վերոնշյալ թեմայով գրողի ստեղծագործություններից առանձնակի աչքի են ընկնում «Հաշտություն» (1893), «Վրաստանի մասին» (1916), «Վրաստանի պոետներին» (1919), «Վրաստանի ոգին» (1919) և այլ բանաստեղծություններ: Հատկանշական է, որ Հ. Թումանյանը Վրաստանն անվանում էր «Կովկասյան Ֆրանսիա», իսկ վրացիներին՝ «արժանավոր հեղափոխականների և բանաստեղծների ազգ»¹:

Հայ ազդի արժանավոր գավակի խորին հարգանքը Վրաստանի նկատմամբ արտահայտվում էր նաև նրա գործունեության մեջ: «Վրացական համայնարանի հիմնադիր հասարակությանը» Հ. Թումանյանը նվիրաբերեց 100 ուրբի (ոսկով): Նման վարձույթով նա արտահայտեց Հայ հասարակայնության առաջավոր հատվածի գիրքորոշումը՝ 1917 թ. հոկտեմբերի 25-ին այդ հաստատության վարչությանը հասցեարկված ջերմ նամակում Հ. Թումանյանը գրում էր. «Միայն գիտությունը, գրականությունը և արվեստն են ի վիճակի հաղթահարելու այն անգունգը, որը բաժանում է ժողովուրդներին և միայն նրանք կարող են ստեղծել ապագայի լավագույն կյանքն ու իսկական մարգուն... Ես ոգևորությամբ եմ պատկերացնում ունակ և բարյացակամ վրացուն, որը բարձրագույն կրթությունը ստանում է մայրենի լեզվով»²:

Վրացական համալսարանի հիմնադիր հասարակության վարչության 1917 թ. նոյեմբերի 7-ի Հ. Թումանյանին հասցեագրված շնորհակալական սլոտասխան նամակում նշված էր. «Ձեր խորիմաստ խոսքերում, որպես իր հայրենիքի հարազատ գավակի և նրա խոհերի ու զգացմունքների տաղանգավոր արտահայտչի, մենք տեսնում ենք ողջ Հայ ժողովրդի բարյացակամությունն ու ողջունը»³:

1918 թ. հունվարի 26-ին Թբիլիսիում բացվեց առաջին վրացական համալսարանը: Դրա հիմնադրումը մեծ ոգևորություն առաջացրեց ոչ միայն

¹ Տ. Տ ա բ ի ձ Ե. Պատմվածքներ. երեք հատորով. հ. 2-րդ (հոդվածներ դրականության և արվեստի մասին, գիրքը մշակել և տպագրության համար նախապատրաստել է Շ. Դեմետրաձեն), Թբիլիսի, 1966, էջ 251 (վրաց.):

² Գ. Ղ ո ռ ա ն ա շ Վ ի Լ Ի. Իվանե Զավախիշվիլի (նորովի ընթերցելու փորձ). Թբիլիսի, 1999, էջ 93 (վրաց.):

³ Ս. Զ ո ռ Բ Ե Ն ա ձ Ե. Իվանե Զավախիշվիլու կյանքն ու ավանդը. Թբիլիսի, 1984, էջ 204 (վրաց.):

⁴ Նույն անդում:

վրաց, այլև կովկասյան մյուս ժողովուրդների շրջանում: Եղբայրական վրաց ժողովրդի ուրախությունը կիսեց նաև Թբիլիսիի հայ հասարակայնությունը, այն իր արտահայտությունը գտավ տեղի հայկական մամուլում: Այդ առումով առանձնակի ուշադրության են արժանի «Հորիզոն» և «Մշակ» թերթերում հրատարակված հոդվածները: Ցավոք, 1918 թ. վերջին Վրաստանի և Հայաստանի միջև սահմանների կապակցությամբ ծագեցին տարածայնություններ, որոնք այնուհետև վերաճեցին զինված դիմակայություն: Եղբայրասպան սպտերազմն սկսելուց առաջ Թումանյանը վրաց և հայ քաղաքագետներին խաղաղ կարգավորման կոչ էր անում: Այդ հարցով «Кавказское слово» թերթում հրատարակեց հատուկ հոդված⁵:

1918 թ. նոյեմբերի 14-ին «Էրթորա» («Միասնություն») թերթը Հ. Թումանյանի վերոնշյալ հոդվածի կապակցությամբ ապապրեց հետևյալ մեկնաբանությունը. «Հուլիսից զբաղվել է ջերմ, հաշտեցման միտումով ...: Թեպետ պարսկական Թումանյանն էլ այն կարծիքին է, որ Լուին և Փամբակը Վրաստանին չպետք է պատկանեն, սակայն, ինչպես հետևում է նրա հոդվածից, այդ բարդ հարցի լուծման համար, նրա կարծիքով, պետք է բազմակողմանիորեն խորհել և չափել-ձևել, իսկ դա հնարավոր է խորհրդաժողովի գումարմամբ»⁶:

Վրաց ճանաչված բանաստեղծ Տիգրան Տաբիձեն (1895–1937) Հ. Թումանյանի կեցվածքը գնահատեց որպես Վրաստանի նկատմամբ մեծ սիրո արտահայտություն: Տ. Տաբիձեի գնահատմամբ, «Թումանյանը, իրոք, նախնայաց նահապետի նման վիթխարի ավելեցություն ունի հայ ազգի վրա: Նրան լսում են ոչ միայն ժողովուրդը, այլև ժողովրդի սուսընթացները... Իր ժողովրդի նկատմամբ նման ազդեցությունն ինձ հիշեցնում է Իլիա Ծավձավաձեի հեղինակությունը, որին մեր սերունդը հավատում էր միայն պատմածներով:

Բացառիկ էր նաև Հովհաննեսի վերաբերմունքը մեր բանաստեղծների նկատմամբ: Չի եղել դեպք, երբ մեր կողքին չի գտնվել Հովհաննեսը և չի ասել իր խոսքը... Հովհաննեսը երազում էր, որ երկու հարևան ազգերի միջև հաստատված լինե՞ր հոգևոր կապ»⁷:

Չնայած Վրաստանի և Հայաստանի միջև 1918 թ. դեկտեմբերին տեղի ունեցած ազդմական հակամարտությանը, վրաց հասարակայնությունը ևս մեծ պատվով նշեց Հ. Թումանյանի ծննդյան 50-ամյակը: Այդ առումով աչքի ընկավ վրացական մամուլը⁸: 1919 թ. փետրվարի 20-ին հորեկյանի կապակցությամբ Հ. Թումանյանին շնորհավորեցին Վրաստանի ժողովրդավարական Հանրապետության կառավարության նախագահ Նոյե Ժորդանյան և կառավարության անդամները: Վրաստանի արտաքին դործերի նախարար Եվգենի Գեդեկկորո՝ մամուլում հրատարակված շնորհավորական հեռագրում նշված էր. «Թույլ տվեք ինձ, Ձեր ազգանդի երկրպագուներից մեկին, Ձեզ ուղղել իմ սրտագին շնորհավորանքները: Իհարկե, չատերն են մտածում, ոմանք ցավով, մյուսները՝ ուրախությամբ, որ թշնա-

⁵ Գ. Ծ ու մ բ ու ը ի ձ Ե. Վրաստան – Հայաստան հարաբերությունները 1918–1921 թվականներին և վրաց հասարակայնության կարծիքը. Թբիլիսի, 1999, էջ 38 (վրաց.):

⁶ «Էրթորա», 1918, № 246 (վրաց.):

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում, էջ 250–251:

⁹ «Սախալիսո գազեթի», 1919, № 467 (վրաց.):

մության և վրեժխնդրության սաղմերը, որոնք առատորեն սաբաժնում են մեր հարազատ հողի վրա. ներկա սլաշին տալիս են առատ բերք: Կանցնի որոշակի ժամանակ. կմաքրվի մթնոլորտը և «մեղրի մի կաթիլը» մեր ժողովուրդների համար կվերածվի եղբայրության և միասնության կենարար աղբյուրի»¹⁰:

1920 թ. հունվարի 11-ին Փարիզի պապաթնաժողովում Արևմտյան Եվրոպայի երկրները ճանաչեցին Վրաստանի պետական անկախությունը: Այն մեծ հանդիսություն էր նշվեց Թբիլիսիում: Այդ առթիվ Հ. Թումանյանն ի սրտե շնորհավորեց վրաց ժողովրդին: Նա հունվարի 13-ին վաղ առավոտյան այցելեց «Սախալիտ սաբմե» («Ժողովրդական գործ») թերթի խմբագրություն և վրաց լրագրողներին հայտարարեց. «Դա մեղ համար նույնքան ուրախալի է, որքան Հայաստանի անկախության ճանաչումը»¹¹:

Երախտագրությամբ վրաց ժողովուրդը բարձր գնահատեց ամենայն հայույրանաստեղծի գրական վաստակը: Նրա ստեղծագործությունների մեծ մասը թարգմանվեց և հրատարակվեց վրացերենով: Վրաց ճանաչված բանաստեղծ Իոսեբ Գրիշաչվիլու թարգմանությունները 1924 թ. Թբիլիսիում հրատարակվեց Հ. Թումանյանի ստեղծագործությունների հատընտիրը¹²: Գրողի ստեղծագործական ժառանգության զգալի մասը վրացերեն լեզվով, առանձին գրքերով լույս տեսան 1956 և 1969 թթ.¹³: Միաժամանակ տպագրվեցին վրաց հեղինակների աշխատությունները Թումանյանի մասին¹⁴: Հայ ժողովրդի արժանավոր դավանակ Հովհաննես Թումանյանը պատմության մեջ մնաց որպես հայ-վրացական բարեկամության ճշմարիտ ջատագով:

ОВАНЕС ТУМАНЯН И ГРУЗИЯ

ЛЕЛА ДЖАВАХИШВИЛИ. (Тбилиси)

Резюме

Великий армянский поэт и общественный деятель Ов. Туманян (1869–1923) самозабвенно защищал и трепетно относился к дружеским и добрососедским отношениям между грузинским и армянским народами. В его богатом и многогранном литературном наследии значительное место занимает тема Грузии. Ов. Туманян поддерживал и приветствовал события, которые характеризовали национальный подъем грузинской общественности. В свою очередь, грузинские литературно-общественные деятели высоко ценили деятельность Ов. Туманяна в этом направлении.

¹⁰ «Էրիտրա», 1919, № 41:

¹¹ «Սախալիտ գազեթի», 1920, № 727:

¹² Հ. Թումանյան. Ընտիր երկեր. Թբիլիսի, 1924 (վրաց.):

¹³ Հ. Թումանյան. Ընտիր երկեր. Թբիլիսի 1956 (վրաց.): Հ. Թումանյան. Բանաստեղծություններ և սոսններ. Թբիլիսի, 1969 (վրաց.):

¹⁴ Բ. Արվելաձե. Հովհաննես Թումանյանը և Վրաստանը. Թբիլիսի, 1969 (վրաց.): Ն. Լախվիլի. Հովհաննես Թումանյանը վրացերեն (մատենագիտական անոտացիոն հետազոտություն). Թբիլիսի, 1973 (վրաց.):